

«ՎԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ» ՎԵՊԻ ՇԱՐԱՀՅՈՒՄԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Լ. Կ. ԵԶԵԿՅԱՆ

Ի տարբերություն ձևաբանական համակարգի, որտեղ գրողի հնարավորությունները լեզվական միջոցների ընտրության առումով համեմատաբար սահմանափակ են գեղարվեստական երկում, շարահյուսական մակարդակն ավելի մեծ ու լայն հնարավորություններ է ընձեռնում գրողին, քանի որ այստեղ ավելի քիչ են գործում քերականական կանոններով պարտադրվող միօրինակությունն ու զանազան սահմանափակումները:

Այլ կերպ ասած՝ յուրաքանչյուր գրողի լեզվի վարպետությունն ու ոճական ինքնատիպությունը որոշակիորեն կարող են դրսևորվել նաև նրա երկերի շարահյուսական առանձնահատկություններով և միայն նրան յուրահատուկ լեզվական կառույցների միջոցով: Այս առումով իրավացի է Ա. Ի. Եֆիմովը, երբ նշում է, որ «Գրողի ոճի առանձնահատկության բանալին ամենից առաջ շարահյուսության մեջ է, քանի որ այդ կարգը (իմա՝ ոճաբանական-անհատական) գերազանցապես կառուցվածքային-շարահյուսական է»¹:

Գեղարվեստական ստեղծագործության շարահյուսական կառուցվածքի ուսումնասիրությունն ամենից առաջ ենթադրում է տվյալ երկին (կամ հեղինակին ընդհանրապես) յուրահատուկ նախադասությունների կառուցվածքի, կապակցության տարբեր եղանակների յնություն, ինչպես նաև շարահյուսական ավելի բարդ ու ծավալուն միավորների՝ պարբերությունների կառուցվածքային և ոճական վերլուծություն: Գրողի ստեղծագործական անհատականությունը կարող է դրսևորվել ոչ միայն նախադասության կամ խոսքային այլ միավորների ընտրության դեպքում, այլև նախադասության յուրաքանչյուր անդամի կապակցության եղանակներն ու սկզբունքները մշակելիս: «Գեղարվեստական գրականության ոճագիտության համար,— նշում է Վ. Վինոգրադովը,— հսկայական նշանակություն ունեն լեզվի կառուցվածքի մեջ դրված բառերի դասավորման միջոցները և սկզբունքները, ինչպես նաև նրանց հետ կապված՝ նախադասության անդամների հնչեղանգային բաժանման ձևերն ու կարգերը:

Ոճագիտական շարահյուսության խնդիրները, կառուցման ձևերի ու քննությունների տարբերությունները, նույնիսկ պարզ նախադասության կառուցվածքի և ծավալի տարբերությունը շատ կարևոր է գրական-գեղարվեստական տեքստի շարահյուսական յուրահատկությունների գնահատման և իմացության համար»²:

Ահա հենց Խ. Արոյանի «Վերքի» շարահյուսական կառուցվածքի քննությունն էլ մենք փորձելու ենք այս մոտեցմամբ տանել, ամենից առաջ քաջահայտել շարահյուսական այն կառույցները, որոնք հարազատ են հեղինակի մտածելակերպին ու անհատականությանը, նրա ոճին, Աշել դրանց կառուցվածքային առանձնահատկությունները, միևնույն ժամանակ՝ գործածության հաճախականությունն ու ոճական երանգավորումները: Այստեղ ամենից առաջ նկատի ենք ունենալու ինչպես տվյալ շրջանի գրական, այնպես և գեղարվեստական գրականության լեզվի ընդհանուր վիճակը, զարգացման մակարդակը և անշուշտ՝ նաև հեղինակի որոշակի նպատակադրումները, որոնք նկատելի են «Վերքը» շարադրելիս:

Գրական երկի շարահյուսական կառուցվածքը քննելիս ընդունված է նաև շարահյուսական միավորների կիրառության հաճախականության պարզաբանման եղանակը, Աշելով պարզ և բարդ նախադասությունների, շարահյուսական առանձին կառույցների և միավորների գործածության հաճախականությունը: Ուսումնասիրության այս եղանակը հատկապես տարածված է ժամանակակից ռուս ոճաբանության մեջ, ուր որոշ ուսումնասիրողներ գըտնում են, որ առանձին երկերում նպատակահարմար է պարզ և բարդ նախադասությունները

¹ А. И. Ефимов, *Стилистика художественной речи*, М., 1961, с. 415.

² В. В. Виноградов, *Стилистика. Поэтика*, М., 1963, с. 12.

րի, ինչպես նաև մի շարք բարդ կառույցների տոկոսային հարաբերակցության ճշգրտումը, քանի որ ավելի հաճախակի գործածվող կառույցների վիճակագրական հաշվարկման եղանակով պարզվել է, որ, օրինակ, ասեճը՝ 1. Ն. Տոլստոյի վեպերում ավելի հաճախ են օգտագործվում բարդ նախադասությունները մի քանի երկրորդականներով, մինչդեռ Ա. Ս. Պուշկինի արձակ երկերին ավելի յուրահատուկ են պարզ, ավելի քիչ գործածական նախադասությունները³: Կամ՝ Ա. Ի. Եփիմովի հաշվումներով՝ Ա. Պ. Չեխովի ստեղծագործություններում 38 %-ը պարզ և 62 %-ը բարդ նախադասություններ են, Լ. Ն. Տոլստոյի երկերում՝ 40-ը պարզ և 60 տոկոսը բարդ կառույցի նախադասություններ են⁴:

Մեր ուսումնասիրությունից պարզվել է, որ հայ պատմավեպերում ևս շարահյուսական-կառուցվածքային տարբերությունը բավականին զգալի է:

Եթե Դ. Դեմիրճյանի «Վարդանանք»-ին ավելի բնորոշ են պարզ կառուցվածքի, ոչ պարբերավոր նախադասությունների և կառույցների, այս ևս. Ջորյանի «Պապ թագավոր» պատմավեպում հակառակ երևույթն է նկատվում, այստեղ գերակշռում են բարդ, ստորադասական բնույթի նախադասությունները, բավականին շատ են նաև պարբերություններով հարուստ հատվածներ: Նման կառույցը շարահյուսական մասնակի տարբերություններով բնորոշ է նաև Բաֆֆու պատմավեպերին⁵:

Նույնիսկ նշված միևնույն հեղինակների տարբեր երկերում երբեմն պարզ և բարդ նախադասությունների կիրառության հաճախականությունը զգալիորեն տարբեր է՝ կապված նախ երկի թեմայից և շարադրանքի բովանդակությունից, ինչպես նաև կարող է պայմանավորված լինել ժանրային առանձնահատկությամբ:

Աճուշտ, Արքվյանի «Վերքի» շարահյուսական կառուցվածքի ուսումնասիրության ժամանակ ևս կարելի է դիմել նախադասությունների կառուցվածքի վիճակագրական եղանակին, սակայն կարծում ենք, որ սա ուսումնասիրման օժանդակ միջոց է և միայն ընդհանուր պատկերացում կարող է տալ տվյալ երկի շարահյուսական առանձնահատկությունների և բնականաբար նաև հեղինակի անհատական ոճի, նրա ինքնատիպության վերաբերյալ:

Ծարահյուսական միջոցների ընտրությունը ևս պայմանավորված է հեղինակի լեզվամշտածողությամբ, նրա ոճական անհատականությամբ, ինչպես նաև՝ նյութի թելադրանքով և ընդհանրապես՝ խոսքի գործառական բնույթով:

Որքան էլ «Վերք Հայաստանի» վեպում Արքվյանի հեղինակային խոսքը լեզվական հավակարգով մոտենում է կերպարների խոսքին, այնուամենայնիվ այն բազմաթիվ դեպքերում, այդ թվում և կառուցվածքային առանձնահատկությամբ, տարբերվում է նրանից: Ի տարբերություն այդ և նախորդ շրջանների և՛ արևելահայ, և՛ արևմտահայ գեղարվեստական արձակի, որտեղ գերազանցապես իշխում էր հեղինակի պատմողական խոսքը, Արքվյանի վեպում, չնայած դարձյալ գերակշռող հեղինակի խոսքն է, բայց և այնպես զգալի տեղ է տրվում նաև կերպարների խոսքին, երկխոսություններին, որոնք միաժամանակ նպաստում են խոսքի հնչեղությանն ու ուժգնությանը, յուրահատուկ կենդանություն հաղորդում պատումին:

«Վերք»-ում հեղինակային խոսքը միատարր չէ. գրողի բուն պատմողական խոսքին հաջորդում են նկարագրություններն ու դատողական, վերլուծական հատվածները, որոնք, ինչպես շարահյուսական կառույցներով, այնպես և հնչերանգով ու ռիթմով, իրարից որոշակիորեն տարբերվում են: Այս հատվածներում տարբեր է նաև նախադասությունների ծավալը, ավելի ճիշտ՝ ինչպես նշվում է ռուս լեզվաբանության մեջ, չսոխը (размер) և արտասանական տևողությունն ըստ նախադասության մեջ գործածված անդամների թվի: Արքվյանի «Վերքը» ըստ արտասանական տևողության մեր գրականության մեջ չի կարող համեմատվել մեկ այլ գեղարվեստական ստեղծագործության հետ, քանի որ այստեղ կան առանձին նախադասություններ, որտեղ բառերի թիվը հասնում է 200—250-ի:

«Նախադասությունների չափը»,— նշում է Ա. Ի. Գորշկովիչը,— նախադասության կառուցվածքի համար շատ կարևոր է ու էական, բայց ոչ ինքնավար տարր է նրա կառուցվածքում: Մի կողմից այն կապված է արտահայտության բովանդակության հետ, այսինքն՝ նախադասության մեջ դրված իմաստային և հուզական հաղորդման (ինֆորմացիայի) ծավալի և բնույթի հետ, մյուս կողմից նախադասության չափը պայմանավորված է սեփական ներքին կառուցվածքով, ինչպես նաև նրա բառային, դարձվածաբանական կազմով, որքան

³ Տե՛ս Է. Ս. Артеменко, Н. К. Соколова. О некоторых приемах изучения языка художественной прозы. Воронеж, 1969, էջ 81:

⁴ Տե՛ս Ա. И. Ефимов, նշվ. աշխ., էջ 426:

⁵ Տե՛ս Լ. Վ. Եզեկյան, Բաֆֆու ստեղծագործությունների լեզուն և ոճը, Եր., 1978, էջ 62—63:

տարողունակ են ու ճշգրիտ: Որքան պատկերավոր ու արտահայտիչ են նախադասությունը կազմող բառերն ու դարձվածները, այնքան նախադասությունները կարճ են»:

Ուրեմն՝ «Վերքի» շարահյուսական ողջ հյուսվածքը ոչ միայն հեղինակի անհատականության, ինքնատիպ ոճի, այլև տվյալ երկի ներքին կառուցվածքի, նրա իմաստային ու հուզական նպատակադրման արտահայտություն է:

Երկի գաղափարական բովանդակության ու հեղինակի նպատակադրման, նրա անհատական խառնվածքի անմիջական արտահայտությունն են Արուվյանի ոգևորությունն ու երբեմն նաև ինքնամոռացությունը, որ ամենից առաջ նկատելի է հենց վեպի շարահյուսական կառուցվածքում. նրա մտքերն ու զգացմունքները կարծես ամբարված են եղել և միանգամից ժայթքում են, հոսում գարնանային հորդառատ անձրևի մասն, որի արդյունքը բարդ կառույցների, պարբերությունների հարուստ ու երկարաշունչ նախադասություններ են. «Հայրենասիրության խնդիրը, ժողովրդի աստապանքը,— նկատում է Լեոն,— Արուվյանին խուսեցնում է մի տարերային ուժով, նա պատմում է երկար, անվերջ նկարագրում է, գույներ, քառեր է կուտակում, հաճախ դիմում նաև ժողովրդական չափազանցությունների: Արուվյանի այս մոտեցումը, նրա հափշտակությունը երբեմն վնաս է հասցրել իր երկի գեղարվեստական համաչափությանը, առանձին դեպքերում վեպը ողողել երկար պարբերություններով ու էջերով, երբեմն նաև ավերորդաբանություններով ու շեղումներով, որ հաճախ ուսումնասիրողների օբյեկտիվ դժգոհությունն են առաջացրել»⁷:

Խ. Արուվյանի ուսումնասիրողներից մեկը՝ Ի. Հարությունյանը, «Վերք Հայաստանի» վեպը համարել է զգացմունքների աշխարհ և հենց այդպես էլ վերնագրել իր ուսումնասիրությունը, քանի որ ըստ նրա՝ «Վերքի» խոսքերն ազդում են մարդու սրտի վրա բուն կերպով, որովհետև այդ խոսքերը միմայն գրչի շարժվածքի արդյունք չեն, այլ նույնիսկ հեղինակի՝ Արուվյանի սրտի խոսքերից դուրս թոած հառաչանքներ ու թախծալի մեծախոսություններ...

Զգացմունքների աշխարհ... Այո՛, զգացմունքով, անվերջ զգացմունքներով է ներշնչված մեր նորագույն գրականության այդ անմասն ու հոտավետ ծաղիկը»⁸:

Հենց այս հույզերն ու զգացմունքներն են դրդել Արուվյանին իր արձակ ստեղծագործության բազմաթիվ էջեր գրել «հանգավոր տողերով». խոսքին հաղորդել բանաստեղծական շեշտվածություն ու ջերմ քնարականություն: Եվ իզուր չէ, որ գրականագետ Ն. Մուրադյանը Արուվյանի պոետիկային նկիրված իր ուսումնասիրության մեջ նկատում է, որ «Արուվյանի արձակը արձակ է աչքի համար, բայց ո՛չ ականջի». բազմաթիվ հատվածներ,— շարունակում է նա,— համաչափորեն կրկնվում են: Այդպիսի հեթոսագույությունը նրա արձակին տալիս է համաչափություն: Համաչափությունը յուրահատուկ կազմակերպվածություն է, որ իրապես չափածո խոսքի տարրերից կամ հատկանիշներից մեկն է, ոչ թե արձակի»⁹:

Այդպիսի բանաստեղծական հատվածները «Վերքը»-ում բավականին շատ են. հայ բեղխուղաների խնջույքի առանձին դրվագների, Զանգու գետի, Երևանի բերդի նկարագրությունները և այլն:

Ուշագրավ է, որ բազմավաստակ արուվյանագետ Պ. Հակոբյանը վեպի՝ մեր ձեռքի տակ եղած վերջին տարբերակը (1981 թ.) հրատարակության պատրաստելիս տողատել է վեպի հանգավոր այն հատվածները, որոնք իր իսկ վկայությամբ՝ «հենց չափածո էլ իրավել են Արուվյանի կողմից»:

Ահա դրանցից մեկը.

**Տան կտրներից, հայաթի միջին,
Դաշտի երեսին, հողի բաց դռնին,
Երկնից առաջին, աստղերի տակին
Նրանք չոքեցին, նրանք կանգնեցին,
Էրեխանց ձենը, տղայոց լացը,
Մտողաց սուգը, նրանց մաղթանքը
Իրաքի հետ խառը երկինքն վերացան... (էջ 178)**

Ինչպես արդեն նշել ենք, «Վերքի» շարահյուսական համակարգը ամենից առաջ առանձնանում է բարդ, երկարաշունչ, ծավալուն պարբերություններով հարուստ նախադասու-

⁷ А. И. Горшков. Язык предпушкинской прозы, М., 1981, с. 202.

⁸ Լեո, Ռուսահայոց գրականություն, Վեներիկ, 1928, էջ 144:

⁹ Ի. Հարությունյան, Զգացմունքների աշխարհ, Տիփլիս, 1998, էջ 7:

¹⁰ Ն. Մուրադյան, Արուվյանի պոետիկան, Եր., 1979, էջ 296:

* Այս և հաջորդ մեջբերումները ըստ Խ. Արուվյանի «Վերք Հայաստանի» վեպի 1981 թ. հրատարակության:

թյուններով: Մեր ասածը ավելի համոզիչ դարձնելու նպատակով վեպի տարբեր հատվածներից պատահական ընտրել ենք 50 նախադասություն և ուսումնասիրել դրանք ըստ կառուցվածքի և կազմության եղանակի: Ընդհանուր պատկերը հետևյալն է:

Առաջին հատվածում (էջք 52—58) 50 նախադասություններից միայն երեքն են պարզ, մնացած 47-ից 12-ը բարդ համադասական են, իսկ 35-ը՝ բարդ ստորադասական: Երկրորդ հատվածում (էջք 145—148) հիսունից և ոչ մեկը պարզ չէ, իսկ բարդերից միայն 8-ն են համադասական, մնացած 42-ը բարդ ստորադասական նախադասություններ են: Երրորդը Երևանի բերդի նկարագրությունն է, որտեղ նույնաքանակ նախադասություններից միայն մեկն է պարզ, երեքը համադասական են, 44-ը ստորադասական: Ըստ որում այստեղ հանդիպում են նախադասությունների այնպիսի կառույցներ, որոնք միջին հաշվով 15—20 տող են կազմում՝ 150-ից մինչև 250 բառերով, ուր զգալի թիվ են կազմում հարակատար դերբայով կազմված դարձվածները, որոնք հիմնականում նկարագրվող առարկայի կամ գործողության հատկանիշ են ցույց տալիս: Եվ սա պատահական չէ, քանի որ վեպի այս գլուխում ներկայացվում է Երևանի բերդը. «Հազար գլխանի դևի պես, հազար տարեկան քավթառ, պատված, չորս կողմը խանդակով կապած, բրջերով դայիմացրած, սուր-սուր ատամները գլխին շարած, հինգ զառաչակի հաստ պարսպով երկու տակ բռնած, մեկ ոտը Կոնդուր, մեկ ոտը Դամուրբուլաղի գլխին դրած, մեկ քերանը հյուսիս, մեկը հարավ բաց արած, չորացած, գլուխը երկինքը ցցած, լեճ փեշերը երկրումը փռած, անամոթ երեսը կոկած, սկաղած.. աչքերը դես ու դեն չած...» (182):

Եվ հազար ու մի հատկանիշներով օժտված բերդը, որոնց շնորհիվ ընդգծվում և ահագնոտ է դառնում բերդի արսափազդու, դաժան ու չարագույժ էությունը, այդ «զարհուրելի, սևադեմ ձորը խոտած, անմազ, անլեզու, մարդակեր բերդը, որ դեղմած երեսը հեռու տեղից ծածկում, կառահ աչքերը գետնին գցում, որ միամիտ տեսնողին դիմա շուտով խաթի, դիմա հեշտ իր ծոցը քաշի ու քիրադի, անձեն, անուս կուլ տա, փչացնի» (112):

Երևանի բերդի այս սիմվոլիկ նկարագրությունն ավելի տպավորիչ ու պատկերավոր է դառնում ոչ միայն շարահյուսական մշակված կառույցների, այլև բազմաթիվ փոխաբերական—այլաբանական միջոցների ու չափազանցությունների առատ օգտագործմամբ:

Նախադասությունների այսպիսի կառուցվածքը հիմնականում միևնույն անդամների կուտակման կամ կրկնության արդյունք է, մի քան, որ ընդհանրապես լուրահատուկ է Արքայանի անհատական ոճին: Այս առումով ավելի հետաքրքրական է «Վերքի» այն հատվածը, ուր նկարագրվում է մահմեդականների կրոնական տոնախմբություններից մեկի՝ Մհառայմի արարողությունը: Հարկ է մշել, որ այստեղ կան նախադասություններ, որոնք մեկ ամբողջ էջ են զբաղեցնում, և ոչ թե տարբեր դեպքեր ու իրադարձություններ են նկարագրվում, և պարբերությունը ոչ թե կազմված է տարբեր բնույթի տարասեռ նախադասություններից, ինչպես սովորաբար լինում է բազմաբարդ խոսքի դեպքում, այլ ուղղակի արտահայտվում է միայն մեկ միտք, իսկ ողջ հատվածը նախադասության տարբեր անդամների բազմաթիվ, հաճախ նույնիսկ աննպատակ կուտակումներ են: Կարծում ենք ավելորդ չի լինի մեջ բերել այդ նախադասությունից մեկ հատված, միևնույն ժամանակ ընդգծելով, որ այն «Վերքի», գուցե և արևելահայ գեղարվեստական արձակ գործերի ամենածավալուն և երկարաշունչ նախադասությունն է՝ կազմված 35 տողից և 250 բառերից, որտեղ կա դիմավոր բայով արտահայտված ընդամենը մեկ ստորոգյալ և նրան լրացնող բազմակի անդամներ, որոնք հիմնականում արտահայտված են ձևի պարագա դերբայական դարձվածքով:

«...Ինչպես մեկ բունը քանդված մեղրաճանձի թարուն, էնպես դուս թափեցան ուղղափառ մահմեդականքը, որն իր դուքանիցը, որը բաղիցը, ձորիցը, որը քնաթաթախ, որը սովու աչքը կուլ գնացած, ձենը փորն ընկած, ուսնգն սփրթանած, ունքեր, նոթեր կիտած, գլուխը կախ գցած, որը մեկ ավթաֆա ձեռին, փեշերը վեր քաշած, գոտիկը խրած, Խորասանու սև մորթի երկար գդակը ունքերին քաշած... անկաջները էս կողմն, էն կողմն ոլորած, քցած, գլուխը պոկած, կլեկած, վեր արած, վիզն ու բուկը կեղտոտ, քրտնքով սևացած, կոշտացած, տարթի պես բասմա ընկած. .» և այլն, և այլն (182):

Կենցաղային այսպիսի մանրամասն նկարագիրը, որը բնորոշ է Արքայանի ոճին և հաճախ է հանդիպում վեպում տարբեր ժողովուրդների կյանքի, կենցաղի, սովորույթների նկարագրության ժամանակ, ունի ճանաչողական մեծ արժեք, քայց մյուս կողմից էլ ձգձգ գույն, ծանրաբեռնում է հեղինակի խոսքը, ընթերցողին հաճախ շեղում շարադրանքի հիմնական, բուն նյութից, դժվարացնում երկի ընթերցումը:

Այս նկարագրություններում ակնհայտ է հեղինակի վերաբերմունքը այս կամ այն ժողովրդի կենցաղի, վարք ու բարքի և առանձին սովորույթների նկատմամբ, որ դրսևորվում է լեզվական համապատասխան միջոցների և ռեական բազմապիսի հնարանքների օգնությամբ (ինչպես՝ աչքը կուլ գնացած, ձենը փորն ընկած, գլուխը պոկած, կլեկած, վիզն ու

բուլը կեղտով, քրտնքով սևացած, տարթի պես քասմա ընկած, գորտի քերանի նման սաղ-յւն քուլեր, երեսին ու դեմքին հազար տարվա կեղտ և այլն):

Արքովյանը մահմեդականների ծայրահեղ մոլեռանդությունը ծաղրելու նպատակով ոճական այլևայլ հնարանքներից բացի, դիմում է նաև որոշակի բառերի և արտահայտությունների կրկնությունների և կուտակումների, ինչպես նաև առանձին մանրամասների քծախընդիր նկարագրության, հեզնանքի, որը ինչ-որ տեղ նույնիսկ զավեշտի է վերածվում: Նախադասության տարբեր անդամների կուտակումը և կրկնությունները պարզ նախադասությունների համակարգում իբրև հեղինակի մտածողության, մտքի արտահայտման յուրահատուկ ձև, Արքովյանի անհատական ոճին քնորոշ առանձնահատկություններից են և հաճախ են հանդիպում «Վերք Հայաստանի» վեպում: Նախադասության բազմակի անդամների գործածությունը չնայած երբեմն ծանրաբեռնում է խոսքը, քայց իբրև տվյալ գրողի լեզվաոճական, հատկապես շարահյուսական առանձնահատկություն, միևնույն ժամանակ խոսքին հաղորդում է առանձնահատուկ ուժով, հուզականություն և հնչեղություն: Ինչ վերաբերում է «Վերքի» շարադրանքի ուժեղին և հնչեղանգին, ապա պետք է նշել հետևյալը. վեպի առաջին հատվածները, ուր տրվում է քարիկենդանի նկարագրությունը, կառուցվում են պարզ, ոչ ծավալուն նախադասություններով. այստեղ հանգիստ ու դանդաղ է նաև խոսքի ուժովը, ուժգնությունը, չկա վեպի ողջ հյուսվածքին յուրահատուկ լարվածությունը: Բայց ահա հաղորդվող նյութի բովանդակության հետ կապված՝ աստիճանաբար փոխվում են նաև խոսքի հնչեղանգն ու ուժգնությունը, ուժեղանում է շարադրանքի լարվածությունը, և հեղինակային խոսքը դառնում է երկարաշունչ, մի տեսակ զսպանակված, հատկապես, երբ գրողը որոշ ակնարկներով թափանցում է մեր ժողովրդի պատմական անցյալի խորքերը և ապա՝ անդրադառնում ներկա իրավիճակին ու նրա քաղաքական կացությանը՝ զուգահեռաբար ներկայացնելով իր՝ հեղինակի հոգեվիճակն ու ներքին ծանր ապրումները՝ համապատասխան քնարական շեղումներով:

Նախադասության բազմակի անդամների կուտակումներն ավելի հաճախ են նկատվում ժողովրդի կենցաղի, սովորույթների, ապրելակերպի, մասնավորապես հայ կնոջ արդու-զարդը նկարագրելիս (տե՛ս էջ 88):

Արքովյանի պատմողական խոսքը առանձնահատուկ հնչեղություն և ուժով է ստանում բազմակի ստորոգյալներով կառուցված նախադասություններում, ուր հաճախված են նաև դերբայական դարձվածով արտահայտված լրացումները: Երբեմն էլ Արքովյանը շարահյուսական նման կառույցի է դիմում, երբ նկարագրում է իր հոգեվիճակը, ապրումներն ու տառապանքները: Այս առումով հատկանշական է վեպի սկզբի այն հատվածը, ուր դիմում է «արյունակից քարեկամներին», ցանկանում իր մտքերն ու «մտրազը» հայտնել նրանց ու նոր միայն «հողը մտնել»... Բայց ա՛հ, լեզուս փակ էր, աչքս՝ քաց, քերանս՝ քոնած, սիրտը՝ խոր, ձեռս պակաս, լեզուն՝ կարճ՝ գանձ չունեի, որ գործով ցույց տայի ուզածս, ա՛նունս մեծ չէր, որ սասածս տեղ հասնի՞: Մեր գրքերն էլ՝ գրաբառ, մեր նոր լեզուն էլ՝ անպատիվ, որ սրտիս հարաթը խոսքով հայտնեի, հրամայել չէի կարող, խնդրեի, աղաչեի էլ՝ լեզուս մարդ չէր իմանալ, չունքի ես էլ էի ուզում, որ ինձ վրա չծիծաղեն, չասեն՝ կոպիտ աս, հիմար աս...» (42):

Նախադասության միևնույն անդամների կուտակումներն ավելի հաճախակի են հանդիպում նաև առանձին կերպարների արտաքինի, նրանց խառնվածքի ու էության նկարագրության ժամանակ, երբ մատնանշվում են նրանց բնութագրող հատկանիշները: Այս առումով քնորոշ են Աղասու, Թագուհու, Տեր-Մարկոսի և այլոց նկարագրությունները: Նըշենը միայն, որ կերպարի արտաքինի մանրամասն նկարագրությունն Արքովյանի ոճի կարեվորագույն առանձնահատկություններից է և ունի նաև ոճական որոշակի նպատակադրում:

Նշված բառային կուտակումներն ու կրկնություններն ամենից առաջ պայմանավորված են Արքովյանի ոճի անհատականությամբ. որը նաև խիստ անձնական է, «մոլեգնաբար արեվելանձն ու հայադրոշմ»: Արքովյանի ոճի այս առանձնահատկությունը նրա ուսումնասիրողներից մի քանիսը նմանեցրել են Գր. Նարեկացու ոճին և նշել, որ ուլքեր կարծում են, թե ընդհանրապես հայկական ոճ գոյություն չունի, թող Արքովյանին մոտիկից ուսումնասիրեն, քանի որ «Գր. Նարեկացվոյն հետ Արքովյան ամենեն զուտ ու հզոր ներկայացուցիչն է հայ զգայնության, հայ քնարերգության, հայ քացատրության,— գրում է Ա. Չուպանյանը: Եվ ապա՝ «Բառական կուտակումը, կրկնությանց ու անհագ ընկալյանմանց ձգտումը, զգացման ծայրահեղ շղայնությունը, քացատրությանց վայրենի ուժգնությունը, կոշտության ու փափկության արտասովոր խառնուրդը, ծանր ու դանդաղ երկարարանությունը և միանգամայն՝ երբեմն փայլակնահագույն արագությունն ու փայլը, ահավասիկ ինչ որ կատնեք Նարեկացիին «Ողբերգությանց մատյանին» ու Արքովյանի «Հայրենասիրի ողբ»-ին մեջ, երկու ամենեն հայ գրքերը, որ ունինք և որոնցմե միայն պիտի կրնա ծնիլ հայ ճշմարիտ քանաստեղ-

ծություն մը»¹⁰։ Այնուհետև քննադատն ավելացնում է, որ չնայած Նարեկացու ոճը ավելի նուրբ, ավելի կատարյալ է, իսկ Արքայանիճը օտար բառերով աղարտված, ռամիկ ոգով տոգորված և նվազ մաքուր, բայց և այնպես նրա գործը ավելի նյութ, ավելի հույզ, ավելի կենդանություն է պարունակում, ավելի լայն ու ընդարձակ և իրական պատկերներով է բովանդակված, և Արքայանը «իր խորովիր» կրկնեն՝ իր մեջ փոփոքը զգացմանը կրակեն»։

Գր. Նարեկացու և Արքայանի ոճական ընդհանրություններն ամենից առաջ պայմանավորված են բառային կուտակումների, հատկապես միևնույն բառի նույնանիշների կրկնության, արտակարգ ոգևորվածության և զգացմունքայնության անկայությամբ, որ հաճախ նույնիսկ կարող է խանգարել խոսքի կանոնավոր ընթացքը, խճողել ոճը։ Վ. Առաքելյանը Գր. Նարեկացու խոսքարվեստին նվիրված իր ուսումնասիրության մեջ նշում է, որ «Հաճախ բանաստեղծի ոգևորությունը խանգարում է մտքի բնական ընթացքին և առաջ է քերում խրթնություն, քանդվում են բառերի՝ իրար հետ ունեցած կապակցությունները, հեռանում են ենթակառուցված ու ստորոգյալը, որոշիչն ու որոշյալը, հատկացուցիչն ու հատկացյալը։ Անսպաստ մտքերը հաճախ ընդհատելով միմյանց, կանխում են մեկը մյուսին։ Մի միտքը դեռևս լրիվ լեզվական ձևավորում չստացած, կայծակի նման փայլատակում են երկրորդը, երրորդը և այսպես շարունակ։ Մտքերին զուգընթաց են ծովածավալ զգացումները»¹¹։

Նույնը նկատելի է նաև Արքայանի երկում. տրամաբանությունը, դատողությունները հաճախ ենթարկվում են զգացմունքների և երբեմն «լեզվական միջոցների շարադասական ազատությունը ուղղություն չի ստանում լեզվի ներքին տրամաբանական օրենքներով, և հեղինակը հոգ չի սանձում իր մտքերը հետևողականորեն դասավորելու»։

Արքայան—Նարեկացի ոճական առնչության հիմքը ամենից առաջ զգացմունքայնությունն ու ինքնամոռաց ոգևորությունն է, մարդու, անհատի, հոգեկան ապրումների ընկալումը, կյանքի, բնության երևույթների իմացությունը, որոնք երկու դեպքում էլ ներկայանում են մտքի, զգացմունքների կուտակումներով, ոճական այլևայլ հնարանքներով։

Տեղին է հիշատակել Հր. Թամրազյանի այն ճշմարիտ գնահատականը, որ տրվել է Գր. Նարեկացու խոսքարվեստին և նույնությամբ կարող է վերագրվել նաև Ն. Արքայանին. «Բա շքեղ, հուզառատ, բազմակերպ մի լեզու է, որտեղ կազմակերպիչ դեր են խաղում բանաստեղծի մտածողության անվերջ ծավալումները, հուզական բացառիկ ուժը և մանավանդ՝ անհուն երևակայությունը, որը հոգեբանական իմաստներ է հաղորդում փոխաբերություններին... Ջարմամբ է պատճառում բանաստեղծի դիտողական ուժը, առարկայական աշխարհի, մարդկային կյանքի, բնության մանրամասների իմացությունը, հոգու անդունդները թափանցելու կարողությունը, որոնք լեզվածական հմտության շնորհիվ ստեղծում են կենսական շերտերի պատկերը։ Սակայն հենց դրա շնորհիվ գեղարվեստական լեզուն, նյութ քաղելով կյանքից, դառնալով այսքան երևույթների արտահայտիչը, բոլոր իմաստներով հանդերձ կանապարհ է գտնում դեպի ընթերցողների սիրտը»¹²։

Նշված առնչությունն ու ոճական ընդհանրություններն ավելի ակնհայտ են դառնում, երբ համադրում ենք նշված երկերից որոշ հատվածներ.

...Հետք խոտորնակ, շունչ ծխախառն,
Գնացք խավարային, գոյություն լեռոյի վիմական
Խորհուրդ ծոյալ, կամք անկայուն.
Չար անփոփոխ, բարեմասնություն սասանյալ
Աճճ տարագիր, ավանդ վանառեալ,
Գազան վիրավոր, թռչուն նետահար... (Բան, ԳԶ, Ա)

Եվ միանման հատված վեպի «Ջանգի» հավելվածից.

...Երկիր, ավերակ, դաշտք մեր անբնակ,
Անսիրտք, անողորմք՝ հիմ եղէք վկայք
Կորստյան ազգի, ավերման դաշտի
Չքնաղ քաղաքաց, հզոր իշխանաց,
Որոց զարմ և ճիռ ի ձեռս թշնամիաց,
Ի բանտ, դառն ոճիր, անօրէն ազգաց... (Յ14).

Այստեղ ամենից առաջ նկատելի է շարադրանքի ինչպես ոճական-իմաստային, այնպես և կառուցվածքային-շարահյուսական ընդհանրությունը։

Ի դեպ, Ն. Արքայանի և Գր. Նարեկացու ոճական աղբյուրներին է անդրադարձել նաև

¹⁰ Ա. Չոպանյան, Խաչատուր Արքայան, «Անահիտ», Փարիզ, 1908, № 2, էջ 56—57։

¹¹ Վ. Առաքելյան, Գր. Նարեկացու լեզուն և ոճը, Եր., 1975, էջ 81։

¹² Հր. Թամրազյան, Գեղարվեստական լեզվի և բովանդակության նոր ըմբռնումները հայոց միջնադարում, Եր., 1988, էջ 42—43։

վիպասանի առաջին ուսումնասիրողներից մեկը՝ Մարկոս Աղաբեկյանը: Խոսելով Նարեկացու ստեղծագործության և մասնավորապես պոեմի գեղարվեստական արժանիքների մասին, նա նկատում է, որ Նարեկացին անգերազանցելի է բազմաթիվ ու բազմիմաստ նկարագրություններով, մասնավորապես մարդկային զգացողությունների, նրա մեծությունների ու վեմության, անհուն հավիտենականության, ինչպես նաև մեղավոր մարդուն զղջացնելու և աստծուց ներողություն ու թողություն խնդրելու նկարագրության մեջ, իսկ Արքայանը մարդկության և իր ազգի սիրուց սիրտը վառված ու միտքն արբած՝ բանահյուսում ու բանավիճում է իր հայրենակիցների նահապետական կամ հովվական տնային և դաշտային կյանքը մանրամասն նկատելով և նկարելով նրանց բարքի և վարքի այլևայլ հայկական հանգամանքները մի այնպիսի կենցաղի վառվուրտ լեզվով, որն իր ժամանակին ժողովրդի կենդանի խոսվածքն է, և որի կանոնները, ձևերն ու ոճերը ժողովուրդն ինքն է ստեղծել և զարդարել: «Այս երկու երևելի հանճարներուն մեջ,— գրում է նա,— մենք անչափ սաստիկ իրերմանաություն ենք տեսնում, զգացմանց հորդության և առատության բացատրելու և նկարագրելու մասին, որ կհամարձակինք նաև հոշակել և առաջի դնել ի գիտություն և ի քննություն ամեն բանասիրաց»¹³:

Խ. Արքայանի և Գր. Նարեկացու հոգեհարազատության մասին խոսելիս նշվել է նաև նրանց ստեղծագործություններում եղած մի շարք ոճական այլ հատկանիշներ, որոնցից հատկապես՝ պատկերների հակադրականությունը, նրանց առատությունը, որ, ինչպես արդեն ասվեց, երբեմն հասնում է կուտակման, նույնիսկ լեռնացման, այնուհետև՝ «պատկերների ալիքային հեռացումը կենտրոնից» (Ն. Մուրադյան):

«Վերքի» շարահյուսական կառուցվածքի ուսումնասիրությունը ևս մեզ բերում է այն հետևության, որ վեպի բազմաթիվ կառույցներ, ինչպես կանոնավոր, այնպես և գրական լեզվից կատարված առանձին շեղումներ և՛ նախադասությունների կառուցվածքի, և՛ համաձայնության ու խնդրատության առումներով, ամենից առաջ պայմանավորված են ժողովրդական մտածողությամբ և հիմնականում ժողովրդախոսակցական ոճին բնորոշ լեզվական իրողություններ են:

Մենք արդեն նշել ենք, որ Արքայանի ոճի առանձնահատկություններից մեկը նախադասությունների շարահարական կառույցն է իրեն խոսակցական ոճին յուրահատուկ իրողություն և գերազանցապես հանդիպում է կերպարների խոսքում, չնայած չի բացառվում նաև հեղինակային նկարագրություններում:

«— Էհ, ժամ չի դառավ մեր գլխին, մեկ իշի հարսանիք դառավ, տո,— սկսեց Աղապին... Տո, ձեր տունը չքանգլի, ախր ի՞նչ խաբար ա էսքան սոյոջ ձգել, երկարացնել: Մեկերկու ծունր դիր, երեսիդ մեկ-քանի խաչ հանիր, պրծանք, գնաց. ժամի դուռը պաչ արա, էլ ետ արի, քո բանդ տես: Ի՞նչ ա, էսպես օրն էլ ժամի տուտը բռնի, երկա՛ր մտիկ՝ ա՛նիլ...» (52):

Կամ՝ «Տո, խանի խարաք, ի՞նչ էլավ քեզ. մի քիչ որ համբերես, լեզուդ քեզ անես, լավ չըլի՛, ի՞նչ ես առավոտ-առավոտ էլ բերնիդ կապը կտրել, հո կրակ չի՞ ընկել փողո ու քեզ էրում, խորովում,— ասեց մերը բարկանալով,— հո աշխարքը տարան ոչ, դու մնացիր: Մենք ջա՛ն չունինք, մեզ աստված չի՞ ստեղծել, հողի՞ցը դուս եկանք: Պս-պա, պա-պա.. Էս ժամանակիս տղերքը հենց սալ՝ գծվել, կապովի են դառել» (53):

Սակայն վեպում, հատկապես հեղինակային խոսքում, (մասամբ նաև առանձին կերպարների), զգալի թիվ են կազմում շաղկապներով կապակցվող նախադասությունները, և անմիջապես նշենք, որ կիրառության հաճախականությամբ գերակշռում է ստորադասական «որ» շաղկապը՝ իմաստային տարբեր առումներով: Կարծում ենք, որ այստեղ ամենից առաջ պետք է նկատի ունենալ այն հանգամանքը, որ նշված ձևը իրեն քերականական հանունում գործ է ածվում և՛ իրեն շաղկապ, և՛ իրեն հարաբերական դերանուն: Այնուհետև՝ «որ» շաղկապը բացի մեկնական իմաստից, որ նրա ավելի տարածված կիրառությունն է, գործ է ածվում նաև բազմաթիվ այլ իմաստներով: Այս շաղկապը հայերենում ամենագործածական ստորադասական շաղկապն է և, ինչպես նշում է Մ. Ասատրյանը, «դրանով է պայմանավորված այն, որ այս շաղկապով կապակցվող երկրորդական նախադասությունները բազմաբնույթ են, և չնայած այն հիմնականում հանդես է գալիս բացատրական, մեկնական իմաստով, կարող է հանդես գալ նաև ենթակայի, ուղիղ և անուղղակի խնդիրների, որոշյի և զանազան պարագաների պաշտոններով: Այս շաղկապով կապակցվող նախադասությունների կոնկրետ բնույթը սովորաբար կախված է լինում գերադաս նախադասության

¹³ Մ. Աղաբեկյան, Խաչատուր Արքայան և իր «Զանգին», — «Կոունկ հայոց աշխարհի», 1880, № 11, էջ 871—872:

բայ-ստորոգյալի սեռից, բայիմաստից, իսկ երբեմն էլ գլխավոր և երկրորդական նախադասությունների մեջ գործածվող բայերի եղանակա-ժամանակային ձևերից»¹⁴:

Աթուվյանի վեպում «որ» շաղկապը հատկապես գործածվում է նպատակի, պայմանի, պատճառի, ձևի ժամանակային հարաբերությամբ, որտեղ գերակշռողը, թերևս նպատակի և պայմանի հարաբերությունն է: Եվ սա պատահական չէ, քանի որ խոսակցական լեզուն սովորաբար նախընտրում է բառերի համեմատաբար կարճ, համառոտ ձևերը, ուրեմն և նպատակի, պատճառի իմաստով գործածվող «որպեսզի», «որովհետև» և նման բազմապատկ ձևերի փոխարեն գործ է ածվում «որ» միավանկ ձևը.

«...Գլուխը մահու էր տալիս, որ նրանց կամքը կատարի (80): Ծառ մոր աչք մնացել էր կարոտ, որ նրան իր փեսա շինի, նրա գլխովը պոխտ գա (82):

Սիրտս պատռում ա, որ մեր ողորմելիությունը միտքս եմ բերում» (74):

«Որ» շաղկապը վեպում ունի մեկ այլ հետաքրքիր ոճական կիրառություն, որ դարձյալ գալիս է լեզվի ժողովրդախոսակցական ոլորտից. գոյական վերադիր ունեցող քաղաքըրյալ ստորոգյալներից հետո մեկնական իմաստով գործածվելիս արտահայտում է առարկայի բազմակիություն, անհամար թիվ, անորոշություն, ինչպես՝ «Սուգ ու շիվանն ընկավ գեղը. սուռն էր, որ քանդում էին, մարդ էր, որ փետ ու միս էին արել, փախածներին պտըրտում...» (216):

«Վերք Հայաստանի» վեպում նախադասությունների կառուցվածքը հիմնականում կանոնավոր է, գերակշռում են երկկազմ նախադասությունները, առանձին դեպքերում միայն ոճական այս կամ այն նպատակով, մասնավորապես կերպարների խոսքում նկատելի են նաև թերի, միակազմ, երբեմն նաև՝ առանց ստորոգման նախադասություններ, որոնք տրվյալ խոսքաշարում ունեն հնչեթանգային ավարտվածություն: Այս կարգի նախադասություններն ամենից առաջ յուրահատուկ են խոսակցական լեզվի շարահյուսությանը, քանավոր խոսքին ընդհանրապես և պատահական չէ, որ հանդիպում են երկխոսությունների, հարց ու պատասխանի, ինչպես նաև հապճեպ պատմողական խոսքի ժամանակ: Ինչպես արդեն ճշվել է, «Վերք»-ում գերակշռող հեղինակային պատմողական խոսքն է, որը Աթուվյանը ներկայացնում է յուրահատուկ պատմելաձևով: Նա կարծես երկխոսության մեջ է մտնում ընթերցողի հետ և հաճախ դիմում իր «սիրելի կարդացողին», դրանով իսկ ընդգրծվում է խոսքի ուժգնությունը, ավելի տպավորիչ, կենդանի ու բնական դառնում պատումը: Նման պատմելաձևը ևս Աթուվյանի անհատական ոճի արտահայտություն է: Թերևս այս մոտեցմամբ է պայմանավորված նաև այն հանգամանքը, որ վեպում, չնայած այն քանին, որ հեղինակային խոսքը ընդհանրապես կազմված է պատմողական բնույթի նախադասություններով, այնուամենայնիվ մեծ թիվ են կազմում նաև հարցական, բացականչական և կոչական նախադասությունները, որոնք հիմնականում ճարտասանական երանգավորում ունեն և նկատարում են խոսքի հուզականությանն ու արտահայտչականությանը: Իրենց կառուցվածքով հատկապես ուշագրավ են և մեր ուսումնասիրության համար ոչ պակաս հետաքրքրական ճարտասանական հարցական նախադասությունները, որոնք հիմնականում գործ են ածվում դրական, հաստատական իմաստով, չնայած դրանցից մի քանիսն էլ արտահայտում են ժխտական իմաստ: Վերջիններս ավելի յուրահատուկ են լեզվի ժողովրդախոսակցական ոլորտին:

«Ե՛րբ» հարցական դերանվամբ կազմվող նախադասությունները գրական լեզվում գերազանցապես հարցական բնույթի են և արտահայտում են հարցում կամ պարզաբանում որևէ գործողության կատարման ժամանակի ճշգրտման նպատակով, մինչդեռ Աթուվյանի վեպում նման կառուցվածքները միայն ձևով են հարցական և հիմնականում ունեն ժխտական իմաստ, ինչպես՝

Բայց ա՛յն, ե՛րբ ա երկինքը մեկ կերպի մնացել, որ մարդի սիրտը մնա (45): Առանց սազանդարի ե՛րբ հացը կուլ կերթա (46):

Մեկ ղոճաղ պատահածի: Ինչ պես էս պատիվը ղոճաղինն էր, ե՛րբ կարե՛ին նրանք թաց աչքով նրա երեսին մտիկ տալ (89):

Քուրդ ասեր, օսմանցի ասեր նրան էս խոսքերը, ե՛րբ էճքան կցավեր, հայից էսպես թուք ու մուր ստանա, որ մինչև էճ օրը խո՛տ, ա՛ղբ էր համարում (186):

Ճարտասանական հարցական նախադասությունների մյուս մասը գործ է ածվում դրական, հաստատական իմաստով.

Մենք ջա՛ն չուհինք, մեզ ստոված չի՞ ստեղծել, հողի՞ցը դուս էկանք... Բո կրակ չի՞ ընկել փորդ ու քեզ էրում (58):

Ո՛րմ սիրտը էս սհաթին չէր ճաքի (47):

¹⁴ Մ. Ասատրյան, Ժամանակակից հայերենի ձևաբանության հարցեր, հ. Գ, Եր., 1977, էջ 298:

Այս կառույցի նախադասությունների մի մասը արտահայտում է նաև լրացական հարաբերություն, ուստի և դրանք կարող են դիտվել նաև լրացաճարտասանական հարցական նախադասություններ¹⁵:

Ժխտական իմաստով են գործածվում նաև «հո» եղանակավորող բառով կազմված ճարտասանական հարցական նախադասությունները, որոնք վեպում զգալի թիվ են կազմում և անմիջապես պայմանավորված են ժողովրդական լեզվամտածողությամբ.

Տո, քո տունը չքանդվի, քո տունը, հո սոված չմեռա՛ր, այ խանի խարաք, ի՞նչ էլավ քեզ, մարդի փորը հո դժոխք չի, որ իրան ուտի (59):

— Գնանք, ի՞նչ կա, որ, հո մեզ չեն ուտիլ (77):

— Տո խանի խարաք, ինչ էլավ քեզ, հո կրակ չի՞ ընկել փորդ ու քեզ էրում, խորովում... հո աշխարհքը տարան ոչ, դու մնացիր... (53):

Ընդհանրապես պետք է նշել, որ վեպում ճարտասանական հարցմով նախադասությունները բավականին շատ են, նույնիսկ առանձին հատվածներ ամբողջովին կառուցվում են ճարտասանական հարցական նախադասություններով, ինչպես՝

Ի՞նչ կրակ կարա անեսր սիրտը տաքացնի... Ի՞նչ ջուր կարա սիրով վառված հոգին դինջացնի, հանգցնի... Սերին ի՞նչ կտիրանա, որ մահից վախենա ..

...Ախ, էնպես զարհուրելի սեպից, ու՛մ անկաջն էս ձենն ընկնի, որ սիրտը չտորվի, չխորվի... (308): Այս հատվածը Արուսյանի հետտրական պոթելումն է, գեղարվեստական պատկերի մի լավագույն ցույց, որտեղ միաժամանակ դրսևորվում են հեղինակի հոգսերն ու զգացմունքները, նրա քնարական շեղումները: Այս հատվածում, ինչպես և ընդհանրապես վեպում, զգալի են նաև ճարտասանական կոչերով ու դիմումներով, կոչական և քացականչական նախադասությունները, որոնք խոսքին յուրահատուկ զգացական, հուզաարտահայտչական երանգավորում են հաղորդում: Նշված կարգի նախադասությունները հիմնականում արտահայտում են հիացմունք, ոգևորություն, զարմանք, ափսոսանք, իսկ երբեմն՝ նաև թախիծ, վիշտ, դժգոհություն և միևնույն ժամանակ նպաստում խոսքի բանաստեղծական հյուսվածքին, որով էլ հենց քնորոշվում է «Վերք Հայաստանի» պատմավեպը, որի քազմաթիվ էջեր, ինչպես արդեն ասվել է, գրված են քանաստեղծական, «հանգավոր տողերով»: Սրանով մեկ անգամ ևս հաստատվում են Արուսյանի քանաստեղծական խառնըվածքն ու լեզվի քնարականությունը, որոնք պայմանավորված են նրա ոգևորության, հիացմունքի, ինչպես նաև՝ ցավի ու զայրույթի, դժգոհության առկայությամբ և թելադրվում են մեր ժողովրդի պատմական ճակատագրի ու սլյալ շրջանի ողբերգական կացությունից:

Հենց վեպի առաջաբանում դիմելով իր ժողովրդին, իր ազգին, արյունակից քարեկամներին ու հարազատներին, Արուսյանը գրում է.

«Ոչ քան, երեսուն տարուց ավելի ա, իմ ազիգ հեր, իմ սիրելի ազգ, որ սիրտս կրակ ա ընկել, էրվում, փոթթվում ա, գիշեր-ցերեկ լացն ու սուգը իմ աչքերիցս, ա՛խն ու վա՛խը իմ բերնիցս չի պակասում, ա՛յ իմ արյունակից քարեկամք, որ մեկ միտքս ու մտրագս ձեզ պատմեի ու հետո հողը մտնեի:

Թող ինձ այսուհետև տգետ կանչեն, լեզուս քաց ա էլել, իմ ընտիր, ազիգ, իմ սրտի սիրեկան ազգ:

Թող տրամաբանություն գիտեցողը իրան համքյարի համար գրի, ես՝ քո կորած, շվարած որդին, քեզ համար...

Թաք ըլի, դո՛ւ, դո՛ւ, իմ պատվական ազգ, քո որդու արածը, քո որդու խակ լեզուն սիրես, ընդունիս, ինչպես հերը իր մանուկի կմկմալը, որ աշխարհքի հետ չի փոխիլ...»:

Արուսյանն անընդհատ երկխոսություն մեջ է մտնում իր ժողովրդի, իր ազգի, իր «կարդացողի» հետ, դիմում նրանց, խորհրդածում ու քանավիճում նրանց հետ, որը և ավելի կենդանություն ու ուժգնություն է հաղորդում նրա խոսքին, այն դարձնում իրական, կենդանի գրույց: Իր երկը շարադրելիս Արուսյանը միշտ նրանց է պատկերացրել իր երևակայությամբ, մի պահ վերացել իրականությունից, ոգևորվել ու հաճախ ընկել ինքնամոռացության մեջ, և շրջապատին նույնիսկ թվացել է, թե նա խելագարվել է:

«Աղասին քո փոքր որդին ա,—գրում է նա,— սրանից դհա մեծ, դհա անվանիքը շատ ունիս ինձ մի սիրտ տո՛ւր, արևիդ մատաղ գնամ, տե՛ս, թե ի՞նչ ձևով եմ գնում, նրանց քերում առաջիդ կանգնեցնում, որ դու էլ զարմանաս, թե էնպես որդիք ունեցողը աշխարքումն էլ ի՞նչ դարդ կանի: Երեսս ոտիդ տակը: Տո՛ւր էդ սուրը, ձեռդ էլ մի համթուրեմ, որ ինձ ներես ու գնանք մեր սիրուն Աղասու մոտ... » (48): Եվ այսպե՛ս՝

«...Ա՛խ, այ իմ աստվածասեր կարդացող, քար ըլեր, էս խոսքերը կպատուեր, ո՞ւր մընա մարդ...»:

Եվ ահա խոսքի այս ճարտասանական, հուզական երանգավորումից հետո Արուսյանն

¹⁵ Տե՛ս Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, շարահյուսություն, Եր., 1987, էջ 136:

անցնում է հանդարտ, մեղմ պատմելաձևի, բարիկենդանի հանգամանալի նկարագրությա-
նը, որը հեղինակի պատմողական խոսքի, կենցաղի մանրամասն նկարագրության հաջող-
ված օրինակ է: Այստեղ հետաքրքիր է նաև հեղինակային խոսքի, նրա պատումի ուժովը,
հնչերանգային այդ անցումը, որը ընդհանրապես բնորոշ է Աբովյանի խառնվածքին, նրա
մտածելակերպին ու տրամադրությանը և նրա ոճի անհատականությունը բնութագրող
կարևոր առանձնահատկությունն է: Ավելացնենք նաև, որ վեպի առաջին գլուխը հիմնակա-
նում պատմողական, նկարագրական բնույթ ունի, այն շարադրված է հանդարտ հնչերան-
գով, համեմատաբար ավելի քիչ են լարվածությունն ու հույզերը: Խոսքի հնչերանգը, էլե-
վելջավորումը Աբովյանի վեպում հատկապես նկատելի է տրամախոսությունների ժամանակ,
երբ նա արտակարգ ոգևորության պահին խոսում է իր ժողովրդի, նրա հերոսական անց-
յալի, նրա բազում արժանիքների մասին, մինևույն ժամանակ հակադրելով նրա ծանր ու
լիաժան ճակատագիրը: Հենց այդ պահերին էլ գրողը դիմում է ճարտասանական բազմա-
թիվ հնարանների, բառային կուտակումների ու կրկնությունների, որոնց շնորհիվ բարձ-
րանում են խոսքի հուզականությունն ու հնչելությունը:

Л. К. ЕЗЕКЯН—Некоторые синтаксические особенности языка романа Х. Абовяна «Раны Армении».— В статье впервые подробно рассматривается стилистическое своеобразие ряда синтаксических категорий языка романа Х. Абовяна «Раны Армении», в частности, объем, размер и структура предложений, способы согласования и примыкания в разговорном стиле речи.

На основе богатого языкового материала прослеживается стилистическая аналогия Х. Абовяна с Гр. Нарекаци, которая выражается не только в семантическом, но и зачастую в синтаксическом аспекте. Значительное внимание уделено также стилистическим оттенкам риторических предложений.